ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«14. օգոստոսի» 2017 թվականի № 102-Հ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով, 57-րդ հոդվածով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի փոփոխված արդյունահանման նախագծի 2017 թվականի հուլիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 65 պետական փորձաքննական դրական եզրակացությունը, հաշվի առնելով «Դիլիջան» հանքային ջրի գործարան» ՍՊ ընկերության 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 01 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

Հրամայում եմ

1. «Դիլիջան» հանքային ջրի գործարան» ՍՊ ընկերության՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/54 (1Կ) հորատանցքից արդյունահանման՝ 2012 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՇԱԹՎ-29/124 թույլտվությունում կատարել հետևյալ փոփոխությունը՝

- գործողության ժամկետը երկարաձգել 50 տարով՝ սահմանելով այն մինչև 2067 թվականի օգոստոսի 07-ը:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/54 (1Կ) հորատանցքի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-124 պայմանագրի փոփոխությունը, ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագրի փոփոխությունը վավերացնելուց հետո 10-օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փոփոխությունների փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման իրավունքում փոփոխություններ կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստացումից եռօրյա ժամկետում:

4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ